



## 2. ԱՎՃԻ ՇԱԲՈՒՐԻ ՏՂԵՆ

Կէղնի, չի էղնի, Շարուր անունով մեկ մարդ կէղնի:

Էս մարդը շատ գլխավոր ավճի կէղնի: Էս ավճի Շաբուրը կունենա մեկ կնիկ, մեկ տղա ու մեկ հատ էլ հալիվոր հորոխպեր: Էս հալիվորը ամեն բանից հասկցող, իմաստուն մարդ կէղնի:

Ավճի Շաբուրը մեկ օր կհինի կէրթա ավճության: Էսդին կընկնի, էնդին կընկնի, բան չի անցնի ձեռքը Յտն հա դառնալու օր կէղնի, կաշե օր ահան ճամրու վրա մեկ շանավարմ կայնել է: Հըմը էսքան վախտ, էդ բոյը քաշել էր ավճության մեջ, հըլա էդպես շանավար չէր տեսել: Ոչ ջրի շան պես էր, ո՛չ աղվես էր, մեկ խոսքով, վրայի մորթին էնպես մեկ սամուրմ էր, որ արեգակի պես փելքստար կը: Ինչորիսա, էս ավճի Շաբուրը ուրախցավ.

— Էս լավ էղավ, աստված էսօրվա ղսմաթս էլի հասցուց, — ըսավ ու թվանքն երկնցուց, որ զարկե:

— Ֆա՛, ավճի Շաբուր, — ըսավ շանավարը, — էդ ի՞նչ կէնես, ընծի զարկելո՞ւ կըդատիս: Ծո քեղի բան պտի ըսեմ, ուրիշ բան պտի ըսեմ, արի՝ քովս, — ըսավ:

Ավճի Շաբուրը զարմացավ. ռէս ի՞նչ թավուր շանավար է, — ըսավ, — որ մարդու պես լիզու ելավ, կը խոսիս:

— Քանըմ, — ըսավ, — էս մարդ, դու շանավար, դու ընծի հետ ի՞նչ գործ պտի ունենաս:

Աւ էլի թվանքն երկնցուց, որ զարկե:

— Ավճի Շարուր, — ըսավ շանավարը, — տե՛ս, գուզես զարկ. ետև դու կը փոշմնիս ես միտք ունիմ քեզի մեկ մենք լավություն էնեմ: Ուրիշ բան պտի խրատ տամ ես քեզի, թե խելք ունիս, թվանքդ քեզի քաշե, արի՝ քովս:

Էս անդամ ավճի Շարուրը անկաշ էրավ, էկավ քովր, Քովն էկավ թե լէ՝ էն սհաթին վրա թռավ, բկեն բռնեց, խեղդեց, վար դրեց, լազաթին կերավ:

— Տեսա՛ր, — ըսավ, — ահան քեղի ավճություն, դե հիմի զնա ավճություն էրաւ:

Ավճի Շարուրի կնիկը ու հորոխապերը աշեցին, որ էս անդամին Շարուրը ետ չէկավ: Մեկ օր, էրկու օր, կրեք օր, տեսան չկ, ձեն ու ձուք չը կաւ:

Հորոխապերը բանը հասկցավ, որ դիխուն դազիեմ էկել է, հըմա կնկան հել բան լըսավ: Քանիմ օր լաց շիվան էրին, էլի նստան ամենքն իրանց տեղը: Տղեն զաթի պզտիկ էր, հել բան լը հասկցավ: Էսպես անցավ գնաց:

Խելիմ վախտ որ անցավ, էս տղեն մեննծցավ, խելքը բանի հասավ: Ընկավ մեկ օրմ իրանց տան քունչ ու պուճախը, մեկ քոշա տեղ դուռը գտավ, զարկեց բացեց, մտավ նես, տեսավ որ լիբր սիլլահ է:

— Էս իմ հերս ի՞նչ զանիաթի էր, որ, — ըսավ մորը: — Էսքան սիլլահ կը պահեր:

— Ավճություն կէներ, — ըսավ մերը:

— Ես էլ, — ըսավ, — ավճություն կէնեմ հորս պես:

Հորոխապերը շատ խրատեց էս տղին, որ հոր զանիաթը լը բանցընե: Հոր դիխու զալածը ըսավ, վախեցուց, հրմը չէղավ:

Մեկել օրը ելավ, սիլլահները կապեց, դնաց ավճության: Քանիմ հատ դուզ զարկեց, էկավ տուն: Էսպես քանիմ վախտ գնաց, տեյմորի լավ սորվավ ավճությունը: Մեկ օրմ էլ էլի կանուխ ելավ գնաց իրան բանին, էս դին, էն դին շատ բնկավ, հել բան շանցավ ձեռքը, նիաթը կախեց, ետ զարձավ, որ գա տուն:

Ետ դառնալու վախտը տեսավ, որ ճամբու վրա մեկ շանտվարմ կայնել է, վրեն արեգակի պես կը փելքստա, թվանքը բռնեց որ զարկի:

— Ավճի Շարուրի տղա, կեցի՛, մի՛ զարկե ընձի, — ըսավ շանավարը, — կեցի՛ զամ քովդ, բան պտի ըսիմ, ուրիշ բան, — ըսավ, ու յավաշ, յավտշ մոտեցավ:

— Վա՛յ ես քու էն..., — ըսավ տղեն, — դու ի՞նչ գիտես, թե ես

ավճի Շարուրի տղեն եմ։ Ես ու իմ աստված, ոու ես կերել իմ հոռոս, — բսավ ու թվանը բացեց թե չէ, շանավարն ընկավ։

Էս տղեն մոտեցավ, քերթեց, մորթին բցեց ու մուգին ու ուրախ, ուրախ ընկավ ճամրա, դնաց տուն։ Հորոխապերն որ մորթէ տեսավ՝ զարմացավ։

— Էս որտից ձեւը բցեցիր, — հարցուց։

Տղեն արթդ պատմեց։ — Հայ հեքիաթ, — բսավ, — էսպես, էսպես էղտվ։

— Է՞, լավ էս էրել, — բսավ, — որդի, զորանաս, հորդ հայիֆը հանել ես Հրմա էս մորթին չէղնիմ, շիմանամ էժան ծախես էփուց էս որիշ թաղուր մորթի է, — բսավ, — հոսուն քիսից պակաս լը ծախես։

Առավուտոն տղեն մորթին առավ, ընկավ քաղաքը էսոր տարավ, էնոր տարավ՝ հել զին տվող չէղավ։ Որը էրկու քիսա տվեց, որն էլ իրեր։

— Տո՞ւ, էդ ի՞նչ զին կուտաք, — ըսավ տղեն, — վրես կը իրնդաք, կը հասկնա՞ք էս ինչ մորթի է, — բսավ, ու էլի ետ քերեց տուն։

— Հել զին տվող չէղավ, — բսավ հորոխապորը։

— Տա՞ր թաղուվորին փեշքաշ, — բսավ հորոխապերը, — զաթի էղիկ թաղավորի լայեղ րան է, հրլրաթ էն էլ քեղի րանմ կը բաշխե։

Տղեն անկաչ էրավ հորոխապոր խոսքը, առավ ու տարավ թագուվորին։

— Թաղավորն ապրած կենա, — ըսավ, — էս մորթին քեզի փեշքաշ եմ քերել։

— Լավ էս էրել, որդի՛, շնորհակալ եմ։ Լալա, — ըսավ ետև թագալորը, — խաղնագարին բսա՞ էս աղին տասը քիսա փարա տա։

Լալեն խաղնագարին ըսավ։ Խաղնագարն էլ տասը քիսի տեղը, տասը փարա տվեց ու մեկ շամար էլ քերնին զարկեց ու ճամրու զրեց։

Էս տղեն էլ լալով դնաց հորոխապոր քովն ու գլխուն էկածը պատմեց։

— Ո՞չ բարով, — բսավ, — տանեի թաղավորին փեշքաշ... ձեռս տասը փարա ընկավ ու հրլա մեկ շամար էլ քերնիս զարկին ու ճամրու դրին։

— Վնաս շունի, — բսավ հորոխապերը, — ոու համբերե, խո թագավորին գանգառ չէրի՛ր խաղնագարի վրա։

— Զէ՛, — բսավ տղեն, — րան լըսի։

— Լավ էս էրել, որ րան լես ըսել։

Հիմի էրթանք թագավորի քովը, էս թագավորն, իրիկունը որ  
մութն ընկավ, տեսավ որ, ի՞նչ տեսնի, էս փեշքաշ բերած մորթին  
շորս դին լուս կուտաւ Զարմացավ:

— Լալա,— ըսավ,— էս ի՞նչ բան է, էս մորթին ի՞նչ մորթի է,  
որ էսպես լուս կուտաւ:

— Թագավորն ապրած կենա,— ըսավ լալին,— էս հըլա հել,  
էսպես օտի մեջն էնքան լուս չի տաւ: էս մորթին էնպես մարիֆաթ  
ունի, թե որ, ըսավ, ֆլի ոսկորից մեկ հատ պալատ շինվի ու մեջը  
կախվի, էլ էն վախտը հել ճրագ վառել չի ուզե, շամշրաղի պես շորս  
բոլորը լուս կուտաւ:

— Է՛, էղքան ֆլի ոսկոր ո՞րտեղից պտի գտնվի, ո՞րտից պտի  
բերել տանք, որ պալատ շինվի,— ըսավ թագավորը:

— Ի՞նչ կա որ, թագավորն ապրած կենա,— ըսավ լալին,— էղ-  
պես մորթի գտնող բերող տղեն, ֆլի ոսկոր էլ կրնա բերե, էնոր հա-  
մար էղիկ ի՞նչ մեկ դժար բան է որ:

Մեկել օր առավոտուն կանուխ էկան ավճի Շարուրի տղին կան-  
չեցին.— Թեև էրթանք,— ըսին,— թագավորը բեղի կը կանչե:

էս տղեն առաջ ընկավ գնաց, նես մտավ, գլուխ տվեց, բարե  
բանեց ու թագավորի առաջը կայնավ:

— Տղա՛,— ըսավ թագավորը,— գիտե՞ս ինչ կա, պտի էրթաս  
ընձի համար էնքան ֆլի ոսկոր բերիս, որ ես մեկ պալատը շինեմ,  
բերածդ մորթին մեջը կախեմ, որ շամշրաղի պես լուս տաւ:

— Թագավորն ապրած կենա,— ըսավ տղեն,— էղքան ֆլի ոս-  
կոր ես ո՞րտից բերեմ, ֆլի տեղ բիլա ես շիտեմ:

— Էդ քու բանդ է,— ըսավ թագավորը,— որտեղից որ է պտի  
էրթաս բերես, թե չէ գլուխդ կը զարկեմ:

— Դե՛ որ էղպես է, թագավորն ապրած կենա, հել չէ՝ ընձի  
իրեք օր մոհուլ՝ տուր, էրթամ մտածեմ, տեսնիմ, ետև գամ քովդու  
թե որ կրցա՝ կէրթամ կը բերեմ, թե չէ՝ գլուխս զարկ:

Տղեն նիաթը կախ էրած էկավ տուն. ո՛լ խոսալ, ո՛լ հաց ուտել,  
ո՛լ բան:

— Էսօր ընշի՞ ես էղպես նիաթդ կախել, որդի՞,— հարցուց հո-  
րոխպերը:

— Ես նիաթս լը կախեմ, ըբա ո՞վ կախե, ոչ բարով էղներ, որ  
ես էն մորթին էն օրը տարա թագավորին: Հիմի էլ կայնել է թե.  
«Գնա՛» ընձի համար էնքան ֆլի ոսկոր գտի բեր, որ ես պալատ շի-

նեմ, բերածդ մորթին մեջը կախեմ, որ շամշադի պես չորս գին լուս տառ: Ես հիմի ո՞ր ջահնամեն էրթամ ֆլի ոսկոր դտնիմ բերեմ: Իրեք որ ետև էլ պտի գլուխս ղարկե, որ լը գնացի:

— Էզոր համար գարդ մի էնե, — ըսավ հորոխպերը, — գու հիմի աստված կանչե, ըռահաթ քնի, առավոտուն էլ, ես քեղի ինչ խրատ որ կուտամ, էնպես էրա:

Տղեն քնաց: Առավոտուն ելավ, հորոխպերեն խրատն առավ ու դուդ գնաց թաղավորի քովը:

— Թագավորն ապրած կենա, — ըսավ, — քեղենն գուղեմ քառսուն դավա, քառսուն բարդան բամբակ, քառսուն տիկ գինի, քառսուն հոգի էլ դասապ իրանց սարք ու սուրբովը: Էս ուզածներս բիրադի թաքմիլ կուտաս բնձի, որ էրթամ ֆլի ոսկորներ բերեմ: Հըմա էս բաներու վրա դու շերեք հեշ փարա լը պտի խարճես, էսոնք բիրադի կայի փարովը պտի ղուկս դա, թե չէ թլըսումը խարապ կէղնի, ետև ֆլի ոսկորները էլ շեմ կրնա բերե:

— Լալա, — ըսավ թաղավորը, — տղի բսածները լավ իմացա՞ր:

— Իմացա, թագավորն ապրած կենա:

— Դե գնա՛, էսոնք բիրադի հազր էրա ու էղուց ճամբու դիր թող էրթա:

Լալեն գնաց բիրադի հազրեց ու թասլիմ էրավ տղին: Մեկել օրը էս տղին առավոտուն կանուխ, դասապները, դավեքը, բեռ ու բարխանա առավ ընկավ ճամբա: Էս քյարվանն ընկավ ճամբա գնաց, շատ գնաց, քիշ գնաց, շատ ու քիշն աստված գիտե, զօր գնաց, գիշեր գնաց, տեյմորի հասավ Հնգու երկիրը: Ինչպես որ հորոխպերը խրատ էր տվել, ավճի Շարուրի տղին դնաց հասավ ըսած տեղը: Քառսուն հավուզի քովը բեռ ու բարխանեն թափել տվեց, գավեքին դրկել տվեց հեռու տեղ, հավուզներու շրերը բիրադի դուս թափել տվեց, բամբակով զրի ծակերը բիրադի կալնեց ու քառսուն տիկ գինին բերեց լցեց էդ հավուզներու մեջը, ամեն տիկը մեկ հավուզի մեջ: Ետև դասապներու առավ, քաշվավ քիշ հեռու, ծառներու տակը պահ մտավ:

Ցորեկվա վախտ որ էղավ, շոքեց թե չէ՝ մեկ էլ ավճի Շարուրի տղին տեսավ որ՝ օղորդ, ինչպես հորոխպերն իրան ըսել էր, քառսուն հատ ֆիլ, տոճիկ տալով, սարերուց պրծան էկան, հավուզներու վրա թափան, որ զուր խմեն: Թերանները մոտեցուցին, հոտմը-տացին, տեսան, որ էս զուր չէ՝, ուրիշ բան է, ետ դարձան ու էլի տոճիկ տալով ելան սարերը: Ցրվան ելան սարերը, հըմը քիշմ էլ որ անցավ, ժարավությունը շատ զոռեց, շոքն էլ մեկ թարաֆից, էլի ետ

դարձան, էկան ընկան հավուզներու վրա, էս անդամին էլ գիշեւմինու շաշեցին, կուշտ խմեցին, էհ, զինի ու անսովոր անասուն, բիրաղի էն սհաթին հարրան ու խաշը խոտի պես վար թափան:

— Դե ըսապնե՞ր,— ըսավ ավճի Շաբուրի տղին,— Տիմի ձեր վախտն է, վեր ելեք ու գործի աշկր:

Ղասպները էս բառուն ֆլին էլ մորթեցին, քերթեցին, ոսկորները բիրտղի մասն բաժնեցին, լցին բեռներու մեջը, բարձան ու էլի ետ դարձան գնացին Գնացին հասան իրանց երկիրը: Տղին աարավ բեռները թասլիմ էրավ թագավորին: Թագավորը շատ ուրախցավ, շնորհակալ էղավ:

— Զորանաս,— ըստվ,— որդիս,— ու դարձավ դեպի Լալին,— Հալա,— ըսավ,— խաղնաղարին ըսա թող էս տղին քսանըհինգ քիսա ֆարա տա:

Լալին խաղնաղարին ըսավ, խաղնաղարն էլ քսանըհինգ քիսա ֆարի տևզը քսանըհինգ ֆարա տվեց ու մեկ հատ էլ բերնին զարկեց ճամբու դրեց աղին:

Տղին փոր-փոշման, տրտում գնաց իրանց տուն, բարեավ հորոխպոր, մոր հետ, քեֆերը, հալերը հարցուց, նստավի:

— Է, — ըսավ հորոխպերը, — Ֆլի ոսկորները բերի՞ր, թագավորին տվի՞ր:

— Տվի, — ըսավ տղենու:

— Է, թագավորը քեզի ի՞նչ փեշքաշ տվեց:

— Հեշ ինչ, — ըսավ տղին, — թագավորը Լալին ըսավ, որ խաղնաղարին ըսե, ընձի քսանըհինգ քիսա սոսկի տա, խաղնաղարը քսանըհինգ քիսի տեղ, քսանըհինգ վարա տվեց ու մեկ հատմ էլ բերնիս զարկեց, ճամբու դրեց:

— Է՞ թագավորին խո զու լը գանգտար, բան չըսի՞ր:

— Չէ, — ըսավ տղինու:

— Լավ ես էրել, որ բան լես ըսել թագավորին, — ըսավ հորոխպերը, — Հըլա վախտը չէ, համբերե:

Քանիմ վախտ անցավ, թագավորը պալատը շինեց պրծավ, մորթին կախեց մեջը, Օղորդ օր՝ Լալի ըսածի պես շամշրաղի պես լորս գին լուս տվեց:

— Թագավորն ապրած կինա, — ըսավ Լալին, — էսպես պալատի մեջ, որ մեկ հատմ էլ Հազարան բյուրյուկ էղնի, էլ թայը աշխարհքի երեսը շի գտնվի:

— Է՞ ո՞րտից գտնինք Հազարան բյուրյուկը, — հարցուց թագավորը:

— Ի՞նչ կա որ, թագավորն ապրած կենա, էսքան ֆլի ոսկոր գտնող բերող տղեն, էնիկ էլ կը գտնի կը բերե, Հազարան բյուլյուզ բերելը ավճի Շարուրի տղի համար ի՞նչ մեկ դժար բան է:

Թագավորը մարդ դրկեց ավճի Շարուրի աղի ետևը, կանչեց Տղեն էկավ, գլուխ տվեց, բարե բռնեց, թագավորի դեմը կայնավ:

— Գիտե՞ս ընչի համար եմ կանչել քեզի, — ըսավ թագավորը, — ավճի Շարուրի աղա, պտի էրթաս ընձի համար մեկ Հազարան բյուլյուզ ճարես, բերես, թազա ջինածու պալատի մեջը պահեմ, որ իմ պալատիս թալը էլ աշխարհի երեսը լը գտնվի:

— Հազարան բյուլյուզ ես ո՞րտեղից գտնիմ բերեմ, թագավորն ապրած կենա:

— Որտեղից գուզես գտի բեր, էգ քու բանդ է, չը բերես գլուխոդ կը զարկեմ, — ըսավ թագավորը:

Տղեն տեսավ, որ ուրիշ շարա<sup>1</sup> լը կա.

— Դե՛, թագավորն ապրած կենա, — ըսավ, — հել չէ իրեք օր ընձի մոհուզ տո՛ւր, էրթամ մտածեմ, տեսնիմ:

— Լավ, — ըսավ թագավորը, — գնա մտածե՛, իրեք օր քեզի մոհուզ:

Տղեն էկավ տուն, էլի նիաթը կախ:

— Հա՛, էլի ի՞նչ կա, ընչի<sup>2</sup> ես էղպես նիաթդ կախել, — հարցուց հորոխպերը:

— Ի՞նչ պտի էղնի, ասու կրակն եմ ընկել, էսօր էլ թագավորն ընձի կանչել էր թե. «Պտի էրթաս ընձի համար Հազարան բյուլյուզը գտնիս բերես», ես հիմի ո՞րտեղից էրթամ էգոր համար Հազարան բյուլյուզ բերեմ, լէրթամ էլ գլուխս պտի զարկե:

— Էս անգամիս դժար տեղ է կապել քեզի թագավորը, — ըսավ հորոխպերը, — հըմը վնաս չունի, ես էլի էղոր հնարքը կը գտնիմ, դու հել մի մտածե:

Իրեք օրը թմմավ թե չէ, հորոխպերը մեկ-մեկ իրատ տվեց տղին, ինչ որ պտի ըսեր թագավորին Մեկ հատ էլ թուղթ գրեց իրան բերնեն, որ տանի իրան ըսած Կախ ջոշին տա ու բարն մնա է-րավ հետը:

Տղեն գնաց դյուզ թագավորի քովը, դեմն ելավ, գլուխ տվեց, բարե բռնեց, առաջը կայնավ:

— Թագավորն ապրած կենա, — ըսավ, — կէրթամ ուզածդ Հազարան բյուլյուզը բերելու, հըմը ընձի պտի տաս՝ քառսուն արաբ, իրանց սիլլահ ասպարով, բիթառուն ձիռվ... էսոնք բիրադի Լալի փա-

<sup>1</sup> Ճար (Ս. թ.):

ըովը պտի գլուխ գա, դու որ քու քիսից մեկ փարեմ խարճեցիր, թլը-  
սումը բռզմիշ կէղնի, ես էլ չեմ կրնա Հաղարան բյուրյուլը բերեւ

— Լալա՝, — ըսավ թագավորը, — գնա ավճի Շաբուրի տղի ու-  
զածները բիրադի հազր էրա, թասլիմ էրա իրան, թող էրթա:

Լալեն գնաց բիրադի սարքեց, թասլիմ էրավ տղին ու ճամրու  
դրեց, Ավճի Շաբուրի տղեն առավ քառսուն արարն ընկավ ճամրաւ  
ջօր գնաց, գիշեր գնաց, տեյմորի հասավ Քաջանց երկիրը, Աշեց  
տեսավ, որ ահան, ճամրու վլեն մեկ հալիվոր մարդմ է նստելը

— Թարև քեզի, — ըսավ, — Կախ ջոջ

— Վա՛յ դու բարով, հազար բարի, վարդ ըռեհանով, ավճի Շա-  
րուրի տղա, էս դու էս տեղրանք ի՞նչ բան ունիս:

Տղեն թուղթը ծոցեն հանեց տվեց, որ կարդա իմանա, Կախ ջո-  
ջը գլխի գլուխ թուղթը կարդաց, բիրադի իմացավ:

— Եատ շաթին բան է ուզածդ, ավճի Շաբուրի տղա, հըմա ի՞նչ  
էնեմ, հորոխպորդ խաթեր հըմար պտի էնեմ:

Ետև Կախ ջոջը մեկ-մեկ խրատ տվեց տղին, թե ո՞ւր պտի էր-  
թա ու ի՞նչ հնարքով, կամ թե Հաղարան բյուրյուլն ի՞նչը պտի բե-  
րեւ Խելիմ օր էրթա, պտի մեկ կարմնջի հասնի, էդուեղ ի՞նչ պտի  
ըսէ, որ անցնի էրթա, ետև պտի մտնի մեկ քաղաք, էդուից ի՞նչը պտի  
անցնի, ետև պտի մեկ հասարիմ առաջ հասնի, ի՞նչ պտի ըսե,  
որ արարները թողնին անցնի: Ետև կը հասնի մեկ բաղիմ առաջ, դեռ  
չի թողնի, պտի դկին սըպանե, թե ինչը պտի սըպանե՝ էն էլ ըսավ:  
Ետև պտի մտնի բաղի մեջը, Հաղարան բյուրյուլը սալվի ծառի վրա-  
յից վար առնի բերե, ի՞նչը պտի բերե... ինչորիսա, ի՞նչ երկնցը-  
նենք, ինչ որ պտի էներ, բիրադի մեկ-մեկ խրատ տվեց տղին, ճամ-  
րու քցեց ու արարներուն էլ լը թողեց, որ հետը տանի, իրան քովը  
պահեց: Տղեն ընկավ ճամրա գնաց: Խելիմ տեղ գնաց՝ աջեց որ  
օղորդ՝ Կախ ջոջի ըսածի պես կարմունջմ էկավ առաջը: Կարմունջ  
հըմը հեշ անցնելու հնար լը կար, վրեն բիրադի գլխի գլուխ էնպես  
արծի շարխեր էին ջինել, էդ շարխերը էնպես կը ֆուլտային, որ  
մարդ մոտենար քիմի՝ կը կարտեին:

— Էս ինչը լավ շարխեր են, — ըսավ ավճի Շաբուրի տղեն, —  
տեսնես հըլա ի՞նչը մարդ է էղել էս կարմնջի ջինողը:

Էս ըսելուն պես՝ շարխերն էն սհաթին կայինան, ճամրա տվին,  
տղեն անցավ գնաց: Խելիմ գնաց, հասավ Կախ ջոջի ըսած քաղաքը:  
Քաղաքը մտավ թե չէ. «Վա՛յ հողածինը մտավ մեր երկիրը, հողա-  
ծինը մտավ մեր երկիրը» ճվացին էդ քաղի մարդիքն ու շորս թա-

բաֆից, որը թրով, որը մզրախով՝ վազին էդ ավճի Շարուրի աղի վրա, որ կտոր-կտոր էնեն սպանեն, մենծ կտորը անկաշը թողնեն՝ էս տղեն էլ, ինչը որ Կախ շոշն իրան խրատ էր տվել, էնպես ճվալեն զնաց. ունողածինը էկել է ձեզի ախպեր էղնի՛, հողածինը էկել է ձեզի ախպեր էղնի՛...», էսպես ըսելով դնաց, տեյմորի քաղքեն դուս ելավ:

Քաղքեն դուս ելավ, խելիմ տեղ գնաց, հասավ հասարին: Մոտեցավ դարրազին, տեսավ որ ի՞նչ, Կախ շոշի ըսածի պես՝ դարրազի էս թարաֆն ու էն թարաֆը էնպես արաբներ են կայնել, մզրախները ձեռքերը, որ մարդ սալթ աշելուս, օղորդ որ սյումսլուկը կը լորնաւ Ավճի Շարուրի տղեն էստեղ քիշմ օհմապէ, հըմը ետև էլի իրան ժողվեց, Կախ շոշի ըսածը միտքը բերեց:

— Դարրազը բացե՛ք էրթամ ձեզի հուրի աղջիկ բերե՛մ, — ըսավ, — դարրազը բացե՛ք էրթամ ձեզի հուրի աղջիկ բերե՛մ:

Իրեք անգամ որ էս խոսքն ըսավ թե չէ՝ արաբները էն սհաթին դարրազների զանատները<sup>2</sup> բացին, ճամբա տվին գնաց: Ավճի Շարուրի տղեն էլի խելիմ տեղ գնաց, հասավ Հաղարան բյուրյուկի բաղի դրան առաջը՝ տեսավ որ մեկ դոշա, իրեք գլխանի աժդահար դնմ գյուրզը ձեռքը, կայնել է բազի դրան առաջը:

— Ա՞յ, հա՞յ, հողածին, — ճվաց դեղ, — օձն իրան պորտով, զուշն իրան թեռվ հըլը էստեղ չէր էկել, դու էդ ի՞նչը էկար: Կայնի օր գյուրզս էկավ, Դեն ըսավ ու գյուրզը քցեց թե չէ, տղեն կզավ, գյուրզը էկավ վրայից անցավ:

— Դե՛, հիմի, գե ախպեր, գու կայնի, որ իմ սրես է, ահան էկա, — ըսավ ավճի Շարուրի տղեն ու գիլֆիխար թուրը դուս քաշեց, հասավ վրա ու մեկ զարկելու պես, դեկ իրեք գլուխն էլ մեկեն թոցուց:

— Մեկ էլ զա՛րկ, մեկ էլ զա՛րկ, ա՞յ հողածին, — ճվաց դեր:

— Զէ՛, — ըսավ տղեն, — էլ շեմ զարկի, ես իմ մորես մեկ անգամ եմ էղել:

Ետև, ինչը որ Կախ շոշն իրան խրատ էր տվել, էնպես դեկ սիրտը ճղեց, միշեն դութիկմ հանեց, բացեց աշեց որ, օղորդ, իրեք հատ ճնճղուկ կար մեշը: Էդ իրեքի էլ գլուխները կտրեց թապլեց, որ չէղնի թե ետև դեր էլի սաղնա, լունքի էսոնք դեկ հոգիքն էին, Ետև բաղի դուռը բացեց մտավ նես:

<sup>1</sup> Նիզակ (Ս. Բ.):

<sup>2</sup> Գեղի (Ս. Բ.):

Հնկավ էս դին, էն դին, սալվի ժառը գտավ, ելավ վրեն, Հազարան բյուլյուլն իրան զաֆասովը<sup>1</sup> վար առավ ու ետ դարձավ եկավ:

Ետ դառնալն իմացավ էս խեղճ տղեն... մեկ էլ սա՞ր, քա՞ր, ձո՞ր, բիրագի լիզու ելան, զլզոցն ընկավ շորս դին, շորս թարաֆից ճվացին թե. «Տարա՞ն, տարա՞ն, տարա՞ն...»: Հըմը էս տղեն էլ, ինչը որ Կախ ջոշն իրան խրատ էր տվել, էնպես էլ հել ետեղ լաշեց, գլուխը կախեց, ճամբեն բռնեց ու թեզ-թեզ էկավ: Էկավ տերմորի հասավ Կախ ջոշի քովը:

— Հա, բերի՞ր,— ըսավ Կախ ջոշը:

— Բերի,— ըսավ տղեն:

— Դե՛ գնա՛, աստված հետո:

Ավճի Շարուրի տղեն էլի իրան քառսում ձիավոր արարն առավ ընկավ ճամբա, էկավ ելավ իրանց քաղաքը, դնաց դյուզ թագավորի դրան առաջը, ձիուց իջավ, նես մտավ, գլուխ տվեց թագավորին ու, — Թագավորն ապրած կենա, — ըսավ, — ահան ուզածդ Հազարան բյուլյուլը բերի:

— Վա՛ զորանաս դու, շատ ապրի՞ս, — ըսավ թագավորը: Ետև դարձավ Լալին. — Լալա, — ըսավ, — խազնադարին ըսա, որ ավճի Շարուրի տղին եռեսումհինդ քիսա փարա տա:

Լալին խազնադարին ըսավ: Խազնադարն էլ կանչեց տղին, եռեսումհինդ քիսա փարի տեղ, եռեսումհինդ փարա տվեց, մեկ հատ էլ բերնին զարկեց ու ճամբու դրեց:

Էս ավճի Շարուրի տղեն էլի նիաթը կախ, ձեռք ծոցը, գնաց իրանց տունը, բարնվավ մոր, հորոխապոր հետ:

— Բերի՞ր Հազարան բյուլյուլը, — հարցուց հորոխապերը:

— Բերի, հա՞՛, ոլ բարով բերեի, շարշարանքս էլի գնաց կորավէ թագավորը թամբահ էրավ Լալին, որ խազնադարին ըսե ընձի եռեսումհինդ քիսա օսկի տա, խազնադարն էլ ընձի կանչեց, եռեսումհինդ քիսի տեղ, եռեսումհինդ փարա տվեց, ու մեկ հատ էլ բերնին զարկեց, ու ճամբու գրավէ Ես էս անգամին ասսա՞ պտի էրթամ թագավորին գանգատմիմ, ի՞նչ գուզե էդնի:

Հորոխապերը իմաստուն մարդ էր, լը թողեց:

— Կեցի, — ըսավ, — հըլը վախտը լի, համբերի, էդոր էլ սրեն գուքատ:

<sup>1</sup> Վահեգակ (Ս. Բ.):

<sup>2</sup> Անշուշա (Ս. Բ.):

Հիմի էրթանք թագավորի քովր։ Էս Հազարան բյուլբյուզ որ  
էղավ, պրծավ, քանիմ վախտ անցավ։ Մեկ օր էլ խոսքի մեջ էս Լա-  
լին կայնավ թագավորին ըսավ թե։ — Թագավորն ապրած կենա, հի-  
մի քեզի մեկ բան մենակ մնաց պակաս, էրկու ըսես, լէ, մեկ հատ  
էլ որ Հուրի աղջիկ ձեռք բերես, թագուհի էնես, էլ քու թայդ թագա-  
վոր, սաղ արարոց աշխարհքը լի ճարվի, մեկ հատմ կէղնիս։

— Է՛, Հուրի աղջիկ ո՞րտից ձեռք բերենք։

— Խնչ կա որ, թագավորն ապրած կենա, — ըսավ Լալին, — Հա-  
զարան բյուլբյուզ գտնող բերող աղի համար, Հուրի աղջիկ գտնել բե-  
րեն ինչ դժար բան է։

— Գե՛, ողկեցե՛ք կանչեք ավճի Շաբուրի տղին, — ըսավ թա-  
գավորը։

Լալին մարդիք զրկեց տղի ետևից։ Էս մարդիքը գնացին։

— Քելե էրթանք, — ըսին, — թագավորը քեզի կը կանչի։

Էս տղեն էլ, էլի ընկավ առաջ էկավ, նես մտավ, գլուխ տվեց։  
Բարեկ բռնեց ու թագավորի առաջը կայնավ։

— Քեզի գիտե՞ս ընչի հըմար եմ կանչել, ավճի Շաբուրի  
տղա, — ըսավ թագավորը, — Էս անգամին պտի էրթաս ընծի համար  
մեկ հատ Հուրի աղջիկի բերես, թագուհի էնեմ, որ իմ թայըս թագա-  
վոր արարոց աշխարհքի երեսը էլ հեշ լը ճարվի, ես մեկ հատ էղնիմ։

— Թագավորն ապրած կենա, ես ո՞րտեղից Հուրի աղջիկ գրտ-  
նիմ բերեմ։

— Էդ քու բանդ է, — ըսավ թագավորը, — Հազարան բյուլբյուզ  
գտնող բերողը, Հուրի աղջիկ էլ կրնա բերեւ Դու գիտես, լը գնացիր  
բերելու գլուխս զարկել կուտամ։

Տղեն տեսավ որ ուրիշ լարա շրկա, էլի իրեք օր ժամանակ ուզեց  
թագավորեն, որ մտածե, տեսնի։

Ու էլի կոտրած սրտով ետ դառավ էկավ տուն, հորոխապորը  
գանգատվավ։

— Ասսու կրակն եմ ընկել, — ըսավ, — հիմի էլ թագավորը կայ-  
նել է թե. «Գնա ընծի համար մեկ հատ Հուրի աղջիկ գտի բեր, որ  
թագուհի էնեմ», Հուրի աղջիկ ես հիմի ո՞րտեղից բերեմ, չէրթամ էլ՝  
իրեք օր ետև գլուխս զարկել կուտամ։

— Դարդ մի էնե, — ըսավ հորոխապերը, — էդոր բերելը Հազա-  
րան բյուլբյուզ բերելուց շատ դոլայ է, ես քեզի բիրադի խրատ կու-  
տամ, ինչը որ կսեմ, էնպես էրա։

Իրեք օրը թմմելու էղավ թե լէ, հորոխապերը էս տղին բիրադի

խրատ տվեց, ինչ որ պտի ըսեր, ու դրկեց թագավորի քովը։  
Տղեն գնաց թագավորի քովը։

— Թագավորն ապրած կենա,— ըսավ,— կէրթամ Հուրի աղջիկ բերելու, հրմը ընձի պտի տաս քառուն հատ գյամի<sup>1</sup>, քառուն հատ շահել, ազապ տղեք, միայն քառունն էլ պտի մենծամենծ մարդու տղեք էղնին, քառուն հատ աղջիկ, քառուն ձեռք դավու զուռնա, ամեն գյամու մեջն էլ մեկ-մեկ հատ օտեք պտի սարքել տասն էսոնց, բիրագնի հացը, զուրը, եմակը, ամեն բանը տեղակի պտի հազը էնել տաս. ու քու շերեդ փարեմ էլ լլ պտի խարճես, էս ուզածներս բիրադի լալի քիսիցը պտի էղնի, զու որ փարեմ խարճեցիր, թլըսումը խարապ էղնին, ես էլ շեմ կրնա Հուրի աղջիկը բերել։

— Լալա՛,— ըսավ թագավորը,— տղի ըսածները լավ իմաց՝ ը, պտի էրթաս էսոնք հազը էնես, տաս իրան, ճամբու դնես էրթա։

Լալեն քիթ ու մոռւթը կախած դուս ելավ, էլ ի՞նչ պտի էներ, թագավորի խոսքը խո չէ՛ր կրնա գետին քցի։ Գնաց աղի ըսածները քանիմ օրվա մեջ բիթուն հազրեց, թասլիմ էրավ իրան ու ճամբու դրեց։

Ավճի Շարուրի տղեն քառուն գյամին էլ բաց թողեց ծովի երես՝ դնաց։ Գնա՛ց տեյմորի հասավ ծովի օրթեն։ Էստեղ կայնեցնել տվեց գյամիքն ու սկսեց հարսնիքներ էնել։ Ասսու իրան օրը մեկ ձեռք դավու զուռնեն զօր ու գիշեր զարկել տվեց, մեկ աղջիկը մեկ տղի հետ պսակեց ու մեկ գյամու զոկ օտեն տվեց իրան։ Էսպես քառուն օրվա մեջ, քառուն աղջիկն ու տղին էլ բիրադի իրար հետ պսակեց, ամենքին մեկ-մեկ օտա տվեց ու ինքն էլ, ինչպես որ հորդիսպերը խրատ էր տվել, քաշվավ իրան օտեն։

Էն պինդ վերջի օրը ինքը մենակ նստավ ու քառուն ձեռք դավու զուռնեն էլ զարկել տվեց։ Իրեք զօր, իրեք գիշեր զավու զուռների ձենը հել կտրել լլ տվեց, դմբդմբոցը սաղ ծովը բռնեց։ Հուրի աղջիկներն էլ ծովի տակը դիվաղադար էղան, էսոնք իրեք քուր էին։

— Զա՞նմ, — ըսավ մենծ քուրը մեկելոնց, — ավճի Շարուրի տղի էրածը էս ի՞նչ բան է, քառուն օր դավու զուռնա շալեց, իրան համար հարսնիք էրավ հերիք լէր, էսօր քառուն ձեռք դավու զուռնեն էլի զարկել կուտա, էս մեր քունն ու գագարը կտրեց, էսպես բան չի էղնի։ Համ մեր սինուսի մեջը գա, ու համ էլ մեր գլխուն էս օլինը խաղա՞ն, աղջի՛, — դարձավ ըսավ պտի քուրոջը, — գնա էդ

\* Նավ (Ա. Բ.):

տղին մեկ դաքութենովմ իմ քովս բեր. Հետք խաթրով խոսա, ըստ  
թե մենծ քուրս քեղի կը կանչե, բան պտի ըսե: Մեկ բեր իմ ձեռքս  
քցե, տես էնոր գլխուն ես ի՞նչ օյին կը հանեմ:

Պղտի Հուրին ելավ ջրի երեսը, մտավ ավճի Շաբուրի տղի կե-  
ցած գյամին.

— Բարե քեղի,— ըսավ,— ավճի Շաբուրի տղա, մենծ քուրս  
շատ բարե էրավ, ըսավ. «Թող գա քովս, բան պտի ըսեմ»:

Տղեն հեշ տերը լէղավ, յանի գյուվալ հեշ բան շիմացավ, յասա-  
ման շիրուփը ձեռքը բաշելեն կէրթար գուքար օտի էս գլխեն էն  
գլուխր:

— Յա՛, ավճի Շաբուրի տղա,— նորից ըսավ աղջիկը,— քեղի  
հետ եմ, չե՞ս իմանա, մենծ քուրս քեղի շատ բարե էրավ, ըսավ.  
«Թող գա քովս, բան պտի ըսեմ»:

Տղեն էլի հեշ տերը լէղավ, յանի գյուվալ իրան հետ շեն:

Աղջիկը նեղացավ:

— Շա՛տ մենծ մարդ ես, հա՛,— ըսավ,— որ թանազուկ շես  
էնե, հետս րիլա խոսալու:

Էլի գյամուց ելավ ընկավ ծովը, սըկավ, գնաց մենծ քուրոչ  
քովը:

— Ջա՛նըմ,— ըսավ քուրոջը,— հեշ թանազուկ շէրավ րիլա հե-  
տըս խոսար, մարդ շիտե, թե ի՞նչ թավուր տղա է, լալ է, խոզ է,  
ի՞նչ է, ի՞նչ էրի շէրի հետս լը խոսաց:

— Ա՛յ լաշառ,— ըսավ մենծ քուրը,— սիրուն տղա տեսար,  
հա՛, լը զմըշար որ հետդ բերեիր Աղջի՛,— ետև ըսավ միջնեկ քու-  
րոջը,— հիմի դու գնաւ Գնա՛ հրմը, լէղնի թե դու էլ էնպես էնես,  
բալթի թե, մեկ դաքութենովմ մախսուս խարես բերես:

Միջնեկ Հուրին ելավ ծովի երեսը, մտավ գյամու մեջը.

— Բարե քեղի,— ըսավ,— ավճի Շաբուրի տղա. մենծ քուրս  
քեղի շատ կարուառվ բարե էրավ, ըսավ. «Թող գա, մեկ երեսը տես-  
նիմ, էլի էրթաւ:

Թե օտի պատերուց ձեն ելավ, ավճի Շաբուրի տղի բերնից էլ  
խոսք ելավ: Աղջկա վրեն լաշեց րիլա, յասաման շիրուփը ձեռքն, էլի  
կէրթար գուքար օտի էս գլխեն էն գլուխր:

— Յա՛, քեղի հետ եմ է՛ ավճի Շաբուրի տղա, դու հեշ ձեն շես  
հանե՞:

Տղեն էլի հեշ տերը լէղավ, յանի գյուվալ իրան հետ շեն:

— Ո՛վզե, ի՞նչ մենծ մարդ ես էզել,— ըսավ աղջիկը,— որ թա-

Նազուկ էլ շես էնե մեզի պես աղջկներու հետ խոսալու, քեզի մարդու տեղ դրին, դուն էլ շատ ուռար զանիդ վրա:

Տղեն էլի հել տերը չէղավ: Հուրին ինքն իրան շատ նեղացավ, գուս ելավ տղի յոտից, ընկավ ծովը, սրկավ ու գնաց քուրերու քովը:

— Դու է՞լ լը կրցար բերեիր էգ տղին, աղջի՛, — հարցուց մենծ քուրը:

— Զանըմ, — ըսավ Հուրին, — յասաման յիրովսը գրել է բերնին ու օտի էս գլխեն էն գուրիլ կերթա ու գուրա, ինչ կըսես, հել տերը չի էղնի, մարդու վրա րիլա չի աշե:

— Կեցե՛ք, կեցե՛ք, — ըսավ մենծ քուրը, — կեցե՛ք, ես էրթամ քերեմ, էդ ձեր բանը չէ:

Էս անգամին մենծ Հուրին ելավ ծովի երեսը իրան աղախիններով, ծովը տալղալամել էղավ<sup>1</sup> նես մտավ գյամու մեջը, աղախիններն էլ ետևիցը:

— Ավճի Եարուրի տղա, — ըսավ Հուրին, — դու էգ ի՞նչ մենծ մարդ ես էղել, որ էս քառսուն օր է մեր սինոսի մեջը դավու գուռնա շալել տալով դիվադադար էրիր մեզի, ետև էլ քուրերուս կը զրկեմ, քեզի կը կանչեմ քովս, հել թանազուկ շես էնե րիլա հետները խոսալու, քու միտքդ ի՞նչ է:

Տղեն էլի հել տերը չէղավ, յանի գյուվա իրան հետ չեն:

— Խո՞չ ես, լա՞լ ես, փե՞տ ես, քա՞ր ես, ի՞նչ ես, — ըսավ Հուրին, — որ չես խոսա, հիմի պտի քաշվիս էրթա՞ս սինոսիցս թե չէ, մեկ լուղարմ տուր ընձի:

Տղեն էլի հել տերը չէղավ: Հուրին կատղավ:

— Ավճի Եարուրի տղա, — ըսավ, — էս սհաթին ընծի մեկ սաղ չուղարմ կուտաս՝ տուր, թե չէ, ահան էս է, գյամուց գուս ելա, ծովի շրերուն կըսեմ, որ քառսուն գյամիդ էլ բաթրմիշ էնեն:

Տղեն էլի հել լը խոսաց, շուղար լը տվեց: Հուրին էն է ետ դարձավ, որ գյամուց գուս գա ընկնի ծովը, ավճի Եարուրի տղին էն սհաթին լիրուխը թապլեց ձեռքից, հասավ ետևից, մաղերից բռնեց, փաթթեց թեր.

— Գյամըլի՛ք, — ճվաց, — գյամիքը բաց թողեք:

Գյամըլիքը քառսուն գյամին էլ բաց թողին, ընկան ճամբա, Աղախինները բիրադի իրանց քցեցին ծովը, խլսան, Հուրին մնաց աղի ձեռքը: Առաջ քիշմ շարշրվավ Հուրին, բալքի թե մաղերը պրծցնե աղի ձեռքից, իրան քցի ծովն ու պրծնի:

— Բաց թող մաղերս, ավճի Եարուրի տղա, — ճվաց քանիմ ան-

<sup>1</sup> Աւելինձվեղավ (Վ. Բ.):

գամ, հըմը ետև երոր տեսավ, որ տղեն իրան անկաջ չի էնե, ծոցեն մահրամեն<sup>1</sup> հանեց, քցեց ծովը:

— Սովի ջրեր, ծովի տալղեք,— ճկաց,— բաթմիշ էրեք գյամիքը:

Սովի ջրերը կատղան-փրփրան, տալղեքը շորս թարաֆից սարի պես էկան զարկվան գյամեքին, էն է քիչ մնաց որ բաթմիշ պտի էնեին: Տղեն վախեցավ, ըռանկ-մռանկը քցեց, ձեռները դղացին:

— Հա՛, ավճի Շարուրի տղա,— ըսավ Հուրին,— հիմի<sup>2</sup> ինչ կը-սես, պտի բաց թողնե՞ս մաղերս, թե չէ գյամեքդ բաթմիշ էնել տամ:

Տղեն բաց լըթողեց մաղերը.— Գուզես բաթմիշ էնել տուր,— ոսավ,— էլի բաց չեմ թողնի:

Տալղեքը շատցան, շորս թարաֆից էկան թոփ էղան սարի պես, էն է որ պտի զարկեին գյամեքին ծովի օխտը ղաթը անցնեին, մեկ է, էն թարաֆից ասսու հրամանով մե Զմրութ զուշմ էկավ, աղջկա մահրամեն շրից հանեց, բերեց տվեց ավճի Շարուրի տղին ու ինքն էիր թուավ գնաց: Էս մահրամեն տղեն դրեց շերը, ծովը հանդարտավ: Հուրին էլ խեղնցավ, ձենք կտրեց:

Իրան սինոռից դուս ելան պրօան: Քանիմ օր էլ գնացին, գյամիքը հասան իրանց երկիրը: Բիրադի դուս ելան գյամուց: Տղերքն առան կնանիքն ու գնացին ամեն մեկն իրանց տունը: Ավճի Շարուրի տղեն էլ առավ Հուրին, տարավ թագավորի քովը:

— Թագավորն ապրած կենա, — ըսավ, — ահան քու ուզածդ Հուրի աղջիկն էլ:

Թագավորը Հուրին որ տեսավ, խելքը գնաց.

— Ա՛յ զորանաս դու, — ըսավ, — զորանաս: Ետև դարձավ Լամին: — Լալա ըսավ, — խազնադարին թամրա էրա, ավճի Շարուրի տղին թող քառոսն քիսա փարա տա:

Լալեն խազնադարին ըսավ, խազնադարն էլ կանչեց տղին, քառոսն քիսա փարի տեղը՝ քառոսն փարա տվեց ու մեկ հատ էլ բերնին զարկեց ու ճամբու դրեց:

Էս էտեղ թող մնա, մենք էրթանք Հուրու քովք: Իրիկում որ էղավ, թագավորն ելավ գնաց Հուրի աղջկա օտեն, որ չետը տեսնալի: Թագավորն որ նես մտավ, Հուրին էն սհաթին բանը հասկցավ, ելավ կայնավ:

— Թագավորն ապրած կենա, — ըսավ, — ես մեկիմ վրա գանգատ ունիմ, տեյմորի էն գանգատս լը վերջացնես, շեմ թողնի մոռիկ

<sup>1</sup> Թ-ԱՀԿԲԵԿ (Յ. Բ.):

գաս, ղուլայ բան չէ Հուրի աղջկան կնիկ էնելը, աշե, մոտիկ ես էկել  
թե չէ զիներուս կըսեմ, քեզի կը խեղդեն, էգուց քու սինողապետ-  
ներուդ, լալիդ, իշխաններուդ բիրադի թոփ կէնես, ընձի բերող տղին  
էլ կը կանչես, ես ինչ որ ըսելու ունիմ, էնտեղ կսեմ:

Էս խոսքերու վրա թագավորը կայնավ մնաց: Փոր-փոշման ետ  
դառավ, թաքրար էլի էկավ իրան օտեն:

Ետև Հուրին կանչեց լալին.— լալա, ըսավ,— էս սհաթին կէր-  
թաս քու ոտքովդ էն ընձի բերող տղին կանչես գուքա էստեղ:  
Լալեն գնաց ավճի Շաբուրի տղի ետեղ:

— Քելե էրթանք,— ըսավ,— Հուրին քեզի կը կանչե:

Տղեն ելավ էկավ, նես մտավ Հուրու օտեն:

— Շառաջ արի,— ըսավ Հուրին,— ավճի Շաբուրի տղա, նստի  
էսպես դեմ ու դեմս: Դու ընձի բերիր թագավորի հըմար, հըմա ես  
էնպես մարդու կնիկ դարձողը չեմ: Դու ես բերել ընձի, քեզի էլ պտի  
առնիմ, քեզնից սավայի մարդ իրավունք չունի ընձի առնելու Ընձի  
հայտնի է, թե դու ի՞նչը տղա ես, գլխուդ գալածը բիրադի ես գի-  
տեմ՝ թագավորին սամուր փեշքաշ էնելդ էլ, ֆիր ոսկոր բերելդ էլ,  
հազարան բյուլբյուլ բերելդ էլ, լալի էրածն էլ, խազնադարի էրածն  
էլ: Էսոնք բիրադի ընձի այան է: Հիմի իմ միտքս էն է, որ թագա-  
վորին, լալին ու մեկ էլ խազնադարին խեղդել տամ, քեզի էս երկրին  
թագավոր դնեմ, ես էլ քեզի թագուհի էղնիմ: Հըմը խոսքես պտի  
դուս չը գա՞ս:

— Դուս չեմ գա Հուրի աղջիկ,— ըսավ տղեն,— ինչը գուզես  
էնպես էրաւ:

— Էգուց թագավորը պտի իրան սինողապետներուն թոփ էնե,  
լալեն ու խազնադարն էլ պտի ընտեղ էղնին, քեզ էլ պտի կանչեն, ես  
էլ պտի գամ էնտեղ, ինչ որ խոսալու եմ, պտի խոսամ: Էնտեղ որ  
քեզի բան կը հարցնեմ, չէղնի՞ թե թագավորից, բանից վախենաս  
դյուզ լրսես, լալեն ու խազնադարն ինչ օյին որ հանել են դիխուդ,  
բիրադի էնտեղ մեկ-մեկ ըսա, թող սինողապետներն իմանան:

— Ես վախեցողը չեմ Հուրի աղջիկ,— ըսավ տղեն:

— Դե՞, հիմի էն մահրամեն, որ ես թապլեզի ծովը, ետև Զըմ-  
րութ զուշն բերեց քեզի տվեց, տուր ընձի, էնիկ թըլըսում ունիւ էգուց  
էնտեղ ինչ մարիֆաթ որ ես բանցնելու ունիմ, էնով պտի բանցնեմ:  
Տղեն հանեց մահրամեն տվեց:

— Դե՞ հիմի գնա, — ըսավ տղին, — էգուց ինչ վախտ որ կը  
կանչեն, արի:

Տղեն ելավ ուրախ-ուրախ գնաց տուն:

Մեկել օրը թագավորը թեզոք իրան սինոդապետներուն թոփ էնել տվեց, հըլը հեշ խարար չէր, թե բանը ո՞րտեղ պտի կայնի, Լալին ու խաղնադարին էլ բերել տվեց։ Մարդ դրկեց ավճի Շարուրի տղին կանչել տվեց. էն էլ էկավ։ Թիրագի որ թոփ էղան, մնաց մեկ հուրին։

— Դե՞, գնացեք հիմի Հուրի աղջկան իմաց տվեք թող գա, տեսնենք հըլը ի՞նչ գանգատ ունի, — ըսավ թագավորը։

Գնացին էն սհաթին Հուրի աղջկան էլ իմաց տվին, էն էլ ելավ էկավ, նես մտավ, չորս թարաֆն աշեց, տեսավ որ բիրագի թոփ են էղել։

— Թագավորն ապրած կենա, — ըսավ, — էս ընձի բերող տղեն, որ սամուրը բերեց քեղի փեշքաջ, ի՞նչ տվիր իրան։

— Տասը քիսա փարա տվի, — ըսավ թագավորը։

— Դու քու ձեռքը՝ վդ տվիր, թե թամրահ էրիր, որ տան։

— Լալին ըսի, որ խաղնադարին թամրահ էնե, տղին կանչե, տաւ։

— Է՞, տղա՞, — ըսավ Հուրին, — խաղնադարը քեզի տասը քիսա փարեն տվե՞ց։

— Զէ, — ըսավ տղեն, — Լալեն խաղնադարին ըսավ, խաղնադարն էլ ընձի կանչեց տասը քիսա փարի տեղը, տասը փարա տվեց ու հըլը մեկ հատ էլ բերնիս զարկեց, ճամրու դրեց։

— Է՞, խաղնադար, էս տղի ըսաժն օղո՞րթ է, հա՞։

Խաղնադարը կմկմաց։

— Դյուգ էղածն ըսա, — ըսավ Հուրին, — թե չէ էս սհաթիս զիներուա<sup>1</sup> կըսեմ քեզի խեղղեն։

— Հա՞, — ըսավ խաղնադարը, — օղորթ է տղի ըսածը, Հուրի աղջիկ, տասը քիսի տեղ, տասը փարա տվի ու մեկ հատ էլ բերնին զարկի, ճամրու դրի։

— Է՞, ընչի՞ էղակես էրիր, թագավորի խոսքը ընչի՞ գետին քցեցիր։

— Լալեն ըսավ էղակես էնեմ, որ փարեն մեկ տեղ կիսենք։

— Լա՞գ, — ըսավ Հուրին, — Է՞, թագավորն ապրած կենա, ֆլի ուկորներն որ բերեց, ի՞նչ տվիր էս տղին։

— Քսանըհինգ քիսա փարա տվի, — ըսավ թագավորը։

— Դու ձեռովդ տվի՞ր, թե էլի թամրահ էրիր, որ տան։

— Զէ, Լալին ըսի, որ խաղնադարին ըսե, տղին կանչե, տաւ։

— Է՞, տղա, խաղնադարը քեզի կանչե՞ց, քսանըհինգ քիսա փարեն տվե՞ց։

<sup>1</sup> Գար ոգիներ (Ս. թ.):

— Զէ,— ըսավ տղին,— քսանըհինդ քիսա փարի տեղը քսանըհինդ փարա տվեց ու մեկ հատ էլ բերնիս զարկեց, ճամրու գրեց:

— Լա՛վ,— ըսավ Հուրին,— Հազարան բյուզյուզ բերելուս ի՞նչ բաշխեցիր տղին, թագավորն ապրած կենա:

— Լալին ըսի, որ խազնադարին թամբահ էնե, տղին կանչե, եռունըհինդ քիսա փարա բաշխեւ:

— Տզա՛, էս փարին խազնադարից գնացիր առա՞ր:

— Խազնադարը ընձի կանչեց, եռունըհինդ քիսա փարի տեղը՝ եռունըհինդ փարա տվեց, ու էլի մեկ հատ բերնիս զարկեց, ճամրու գրեց:

— Է՛, ընձի բերելուդ համար, որ թագավորը թամբահ էրավ լալին՝ խազնադարին ըսե, քեզի քառուն քիսա փարա տա, խազնադարը քեզի էդ փարին տվե՞ց, — հարցուց Հուրին:

— Էլի քառուն քիսի տեղը՝ քառուն փարա տվեց ու մեկ հատ էլ բերնիս զարկեց, ճամբու գրեց:

— Է՛, թագավորն ապրած կենա, — ետև դարձավ ըսավ թագավորին Հուրին, — հըլը ըսենք էս լալեղ ու խազնադարը մեկ անգամ իրանց խղճմտանքը մտեհան էին էրել, էղակս անաստվածություն կէնեին, հապա դու, որ էս տղին կը զրկեիր՝ հա էս է, գնա ընձի հըմար ֆիր ոսկոր բեր, հազարան բյուզյուզ բեր, ըշտա հուրի աղջիկ բեր... մեկ օրմ էլ լը պտի՝ կանչեիր հարցնեիր, իմանայիր, թե էդ բաշխածդ փարեքը տղի ձեռքը կընկնե՞ր, թե լէ ծս գիտեմ, թե էսունք բերելու ինչքա՞ն շարչարանք է կերել էս խեղճ տղին: էս օրե՞նք է քու էրածդ: Յա դու էդ ի՞նչը թագավոր ես, որ խազնեղ տվել ես էս գողերու ձեռքը:

Թագավորը, լալին, խազնադարը կուռ էրկաթ կտրան, էսոր գեմը հել բան լը կրցան ըսեին, սինողապետներն էլ ամոթուց, բիրագի քերը կախեցին:

Հուրին հանեց ծոցից թւրսումի մահրամեն, թափ տվեց.

— Սովի շինե՞ր, ծովի քաջքե՞ր, — ճվաց, — էս սհաթին ձեզի էստեղ գուզիմ:

Չորս թարաֆից նես թափան ծովի շիները:

— Ի՞նչ կա, — ըսին, — Հուրի խաթուն:

— Թագավորին, լալին, խազնադարին, էս իրեքին էլ տարեք, ծովի շրերու տակը խեղդեցեք:

Իրեքին էլ էն սհաթին ամփոփեցին, տարան շիները:

Ետև Հուրին դարձավ սինողապետներուն:

— Սինողապետներ, — ըսավ, — հիմի իմ միտքս էն է, որ ավճի

Եարուրի տղին թագավոր դնեմ, ևս էլ էղնիմ ձեզի թագուհի, ի՞նչ  
կըսեք, հիմի իմ խոսքիս պտի անկաշ էնե՛ք, թե չէ շիներուա ըսեմ,  
ձեզ էլ տանին խեղդեն։

Սինողապետները բիրադի ընկան ոտները.—Դու գիտես ըսին,—  
Հուրի աղջիկ ինըդ գուզես, ի՞նչ որ քու կամքդ է, էնպես էրա, գու  
թագուհի, էնիկ թագավոր, էրկուսդ էլ մեր գլխու վրա տեղ ունիք։

Թանը վերշացավ, թաշլայեցին<sup>1</sup> հարսնիք. քառսուն զօր, քառ-  
սուն գիշեր հարսնիք էրին ու էս էրկուսին իրար հետ պատկեցին,  
Ավճի Շարուրի տղեն դարձավ թագավոր, Հուրին էլ էղավ հոգա-  
ծիններուն թագուհի։

Երկնքեն իրեք խնձոր ընկած՝ մեկը ըսողին, մեկը՝ լսողին, մեկն  
էլ էս հեքիաթը գրողին։

<sup>1</sup> Սկսեցին (Ա. Բ.):

